

ի թուակահանութեանս Հայոց Պէ՛» (= 1421) (Նոսարֆ, էջ 49-50)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՔՕԹ, ԵՐԶՆԿԱՅԻ, (ԹԻԼԱԻԱՆ ԳԻՒԴԱՅԻ).—
Աչկ. Կարկառեցի Պետրոս կթղի. Հալէպի մէջ. 1608 ին ուխ-
տաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը իր վարդապետին
մահէն վերջ։ Դարանաղցին հետեւեալ կերպով կը գրէ անոր
պատահած արկածները Երուսաղէմի մէջ. «Եւ ինքն չորս հինգ
ամ եկաց յայնմ կողմն յԱրարիոյ եւ յերուսաղէմ. որ յաւագ
ուրբաթին շատ գան էարբ եւ ի բանտ եղին վասն ճշմարտու-
թիւնն խօսելոյ վանուց ընչից հաշուին. և չար թուաց նորա
զրուցն ամենեցուն և ինքն այլ աներկիւզ եւ դիմախօս էր առ
հակառակն. եւ հնարեցին երկուս ոմանս զի տայցեն սուտ վը-
կայութիւնս. որպէս Տեառն արարին և սրբոյն Ստեփաննոսի,
եւ առաջի դատաւորին վկայեցին սուտ բարուրս մնասուց եւ
գան հարին և եղին ի բանտին յաւագ շաբաթին և եղև չար-
չարակից Քրիստոսի։ Յետ աւագ ուրբաթի ճաշին՝ ամաչեցին
յօտար արգացն. զնացին թէ հանեն ի բռնտէն՝ ասելով. թո-
ղէ՛ք մնացից աստ. և այլ շատ բանս յանդիմանական ասելով
վասն իւր և վասն նոցա և ոչ կամէր ելանել և հաղիւ կարա-
ցին հանել ի բռնտէն։ Եւ յետ Զատիկին, որ ուխտաւորքն զնա-
ցին իւրաքանչիւր յերկիր իւր ծովով եւ ցամաքով, նա՛ սուտ
վկայքն վաճառականք գոլով, ուրիշ յուխտաւորացն՝ յայլ վա-
ճառականացն նաև մտանելով, կամէին նաեւ ի Տիմիաթն։ Նա՛
գեռ տակաւին ի նաւահանգստին գոլով, հուր հարաւ յինքենէ
ի նաւին և այրեցաւ նաւն սուտ վկայիւքն հանդերձ. և այսպէս
առին զառհաւատչեայ դատաստանին և այսպէս մեծ հրաշիւք
յայտնեաց աստուածութիւնն զիրաւ լինելն և զանմեղութիւն
վարդապետին և այլ թննամիքն յամօթ եղեն.» (էջ 358)։

Կարապետ Քօթ վրդ. կը մեկնի Երուսաղէմէն, կ'այցելէ
նաև Եգիպտոսի ուխտատեղիները, Հարանց անապատները եւ
Սինա լեռը. երկու տարի ալ կը մնայ այդ կողմերը, արաբերէն
կ'ուսանի եւ կը քարոզէ այդ լեզուով. «Եւ մեք այլ շատ կա-
ցաք անդ յեգիպտոս եւ նորա նման ո՛չ կարացաք առնել. զի
աստուածատուր էր շնորհ և ո՛չ ստացական» (Անդ., էջ 359)։
Քօթ վրդ. ի այլուր պատահած արկածներու և մահուան մասին
տեսնել՝ (Անդ., էջ 359-363). Կարապետ վրդ. մեռած է 1623 ին
և թաղուած Պալըխլու գերեզմանատունը (քծայ., էջ 50)։ Հե-